ՊԱՅՄԱՆԱԳԻՐ – N ՎՄ 30/943
/ ծառայությունների վճարովի մատուցման վերաբերյալ/

ք. Երևան «24» փետրվար 2017թ.

«ՎԻ ԷՄ-ԱՐ ՓԻ» ՍՊԸ (որակավորման վկայական № ԱԳԳ 121), ի դեմս տնօրեն Տ. Ոսկանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնահատող»), մի կողմից, և «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի ի դեմս տնօրեն Ք.Վ. Ահարոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Պատվիրատու») մյուս կողմից (միասին հիշատակման դեպքում՝ «Կողմեր»), հիմք ընդունելով փոխադարձ համաձայնությունը և ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ «Պայմանագիր») հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պատվիրատուի հանձնարարությամբ Կատարողը պարտավորվում է կատարել «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների վերարտադրման արժեքի գնահատում (այսուհետ՝ «Ծառայություն» կամ «Ծառայություններ»):

1.2. Ծառայության մատուցման ժամկետը սկսվում է «24» փետրվար 2017թ. և ավարտվում՝ «28» փետրվար 2017թ.:

1.3. Պայմանագրի հիման վրա Ծառայությունը համարվում է մատուցված՝ Պատվիրատուի (նրա լիազոր ներկայացուցչի) և Կատարողի (նրա լիազոր ներկայացուցչի) կողմից հանձնման-ընդունման ակտի և/կամ հաշիվ-ապրանքագրի ստորագրման պահից:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Պայմանագրի հիման վրա Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. անհրաժեշտության դեպքում պարզաբանում պահանջել Գնահատողի կողմից կազմված գնահատման եզրակացության մեթոդաբանության վերաբերյալ.

2.1.2. ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

2.1.3. պահանջել Պայմանագրով նախատեսված և Գնահատողի կողմից ստանձնած պարտականությունների լիարժեք կատարում:

2.2. Պայմանագրի հիման վրա Գնահատողն իրավունք ունի՝

2.2.1. Պահանջել Պատվիրատուից վճարել Պայմանագրի 3.1. կետում, նշված գումարը Պայմանագրով սահմանված կարգով.

2.2.2. Պահանջել Պատվիրատուից չխոչընդոտել Ծառայությունների մատուցման բնականոն ընթացքը.

2.2.3. պահանջել Պատվիրատուից իրեն ներկայացնել Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը (պատճենները):

2.3 Պայմանագրի հիման վրա Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1. Գնահատողին վճարել Պայմանագրի 3.1. կետում նշված գումարը.

2.3.1. Կատարողի համար ապահովել բավարար պայմաններ Ծառայությունների մատուցման նպատակով համապատասխան ուսումնասիրություններ, ցուցադրում, տեղազննում կատարելու համար.

2.3.2. Գնահատողին ներկայացնել Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը (պատճենները):

2.3.3. Անհարկի չխոչընդոտել Ծառայությունների մատուցման բնականոն ընթացքը.

2.4. Պայմանագրի հիման վրա Գնահատողը պարտավոր է՝

2.4.1. Ծառայությունների մատուցման հանձնման-ընդունման ակտը և/կամ հաշիվ-ապրանքագիրը ստորագրելուց հետո Պատվիրատուին հանձնել Պայմանագրի 1.1. կետով սահմանված Ծառայության հաշվետվությունը.

2.4.2. որակավորման վկայականը ուժը կորցնելու կամ անվավեր ճանաչվելու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր ձևով տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.3. Պատվիրատուի գործունեությանը վերաբերվող փաստաթղթերը և տվյալները չհանձնել երրորդ անձանց և (կամ) չհրապարակել Պայմանագրով իր կողմից ստանձնած պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած Պատվիրատուի առևտրային և (կամ) այլ գաղտնիքներ.

2.4.4. Ծառայությունը մատուցել ամբողջ ծավալով՝ Պայմանագրի 1.2. կետում նշված ժամկետում:

## 3. Պայմանագրի գինը

3.1. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրի գին սահմանվում է՝ 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ: Կատարողը չի հանդիսանում ավելացված արժեքի հարկ վճարող:

3.2. Պատվիրատուն պարտավորվում է հանձնման-ընդունման ակտի կամ հաշիվ-ապրանքագրի ստորագրման պահից 20 /քսան/ աշխատանքային օրվա ընթացքում բանկային փոխանցման միջոցով Կատարողի «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հ/հ 1570014621240100 հաշվեհամարին վճարել 3.1. կետում նշված Պայմանագրի Գ-ինը:

## 4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին հանձնելու ժամկետի կետանցի դեպքում Պատվիրատուն կարող է պահանջել Կատարողից վճարել տույժ, կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ Պայմանագրի Գ-նի 0.01/զրո ամբողջ զրո մեկ տասնորդական / տոկոսի չափով, ինչպես նաև հատուցում՝ Պատվիրատուի կրած վնասների համար:

4.2 Պայմանագրի 3. կետով նախատեսված վճարումների ժամկետների կետանցի դեպքում Կատարողը կարող է պահանջել Պատվիրատուից վճարել տույժ, կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ վճարման ենթակա գումարի 0.01 /զրո ամբողջ զրո մեկ տասնորդական / տոկոսի չափով:

4.3. Տույժերի և տուգանքների վճարումը սույն Պայմանագրի Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտականությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

4.4. Պայմանագրով համապատասխան կարգավորման բացակայության դեպքերում Կողմերը Պայմանագրի հիման վրա ծագող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

## 5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս Մաժոր)

5.1. Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի հանգամանքներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

5.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Գնահատողի կողմից ներկայացված եզրակացությունը հանդիսանում է «ՎԻ ԷՄ - ԱՐ ՓԻ» ՍՊԸ-ի արտադրանքը և իր մեջ ներառում է առևտրային գաղտնիք, որը ենթակա չէ հրապարակման:

6.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և դադարում է դրա հիման վրա ծագող պարտավորությունների պատշաճ և ամբողջ ծավալով կատարմամբ:

6.3. Պայմանագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները պետք է կատարվեն գրավոր և ստորագրվեն ու կնքվեն կողմերի (կամ նրանց ներկայացուցիչների) կողմից:

6.4. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Տարաձայնությունը ծագելուց հետո 10-օրյա /տաս/ ժամկետում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան իրավասու դատարանի քննությանը:

6.5. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 7. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

*Գնահատող՝*

*«ՎԻ ԷՄ - ԱՐ ՓԻ» ՍՊԸ*

*ՀՀ ք. Երևան, Վարդանանց փակ. 8, թիվ 3*

*“Ամերիաբանկ” ՓԲԸ*

*ՀՎՀՀ 09212841*

*ՀՀ 1570014621240100*

*Տնօրեն՝ Տ. Ոսկանյան*

*(ստորագրություն)*

*Կ.Տ.*

*Պատվիրատու՝*

*«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ*

*ՀՀ ք. Գյումրի, Անի թաղ., 11 փող., թիվ 5/2*

*“Արարատ բանկ” ԲԲԸ*

*ՀՎՀՀ 05536355*

*ՀՀ 1810004776280100*

*Տնօրեն՝ Ք.Վ. Ահարոնյան*

*(ստորագրություն)*

*Կ.Տ.*

Հավելված 4

# Գ Ն Ի   Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

«Վի ԷՄ-ԱՐ ՓԻ» ՍՊԸ-ն «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ին առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք | ԱԱՀ* | Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | Գույքի գնահատում | 50000 | | 50000/հիսուն հազար/ |

**Եթե Մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

« Վի ԷՄ-ԱՐ ՓԻ » ՍՊԸ տնօրեն՝ Տ. Ոսկանյան

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը- Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

20.02.2017թ.

Պայմանագրի կողմ
«Վի ԷՄ-ԱՐ ՓԻ» ՍՊԸ
գտնվելու վայրը ք. Երևան,Վարդանանց փակ. 8, թիվ 3
հհ 1570014621240100
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հվհհ 09212841

Պատվիրատու
«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
գտնվելու վայրը ք. Գյումրի Անի թաղ. 11փող. 5/2
հհ 1810004776280100
«Արարատբանկ» ԲԲԸ
հվհհ 05535355

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«20» «մարտի» 2017 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Գույքի գնահատման ծառայության գնման
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «24» «փետրվարի» 2017 թ.
Պատվիրատուն՝ ի դեմս տնօրեն՝ Ք. Աhարոնյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմս տնօրեն՝ Տ. Ոսկանյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

*Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝*

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը: ըստ պայմանա-գրով հաստատ-ված գնման ժամանակա-ցույցի | քանակական ցուցանիշը: փաստացի | կատարման ժամկետը: ըստ պայմանա-գրով հաստատված գնման ժամանակա-ցույցի | կատարման ժամկետը: փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակա ցույցի/ |
| 1. | Գույքի գնահատում | Գույքի գնահատում | 1 | 1 | | 28.02.17թ | 50.00 | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
ստորագրություն
Ոսկանյան Տ.
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
Ստորագրություն
Էլբակյան Ս.
/պատասխանատու ստորաբաժանման ղեկավար/
ազգանուն, անուն

# Հաշիվ ապրանքագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 14 | Մարտ | 2017 թ. | Բ | 0241968639 |
| [4] Մատուցման ամսաթիվը | | | | |
| 14 | Մարտ | 2017 թ. | | |

| Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

| Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| | | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | | |

| [7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ) |
|---|
| |

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | | |
|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 9 2 1 2 8 4 1 | |
| [9] Անվանումը | Վի ԷՄ- ԱՐ ՓԻ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) | |
| [10] Բանկային տվյալները | Ամերիաբանկ ՓԲԸ | N 1570014621240100 |
| [11] Գտնվելու վայրը (հասցեն) | ԽՆՁՈՐԵՍԿ -- - - | |
| [12] Լրացուցիչ տվյալներ | | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | | |
|---|---|---|
| [13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 5 5 3 6 3 5 5 | |
| [14] Անվանումը | ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) | |
| [15] Բանկային տվյալները | “Արարատ բանկ” ԲԲԸ | N 1810004776280100 |
| [16] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԳՅՈՒՄՐԻ Անի Թաղ. 11 Փող. 5 2 | |
| [17] Լրացուցիչ տվյալներ | Համաձայն 28.02.2017թ հանձնման-ընդունման ակտի | |

| [18] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| NN Ը/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը | Միավորի գինը | Արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Գույքի գնահատման ծառայության վճար | հատ | 1 | 50000 | 50000 |
| Ընդամենը | | | | | 50000 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ VOSKANYAN TIGRAN 1407800183

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝ AHARONYAN KNARIK 5708640316

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

14/03/2017 16:51:29